21. 06. Սրբուհի Սուքիասյան

2022-2023 ուստարվա ընթացքում 6-րդ "ա" դասարանի

դասղեկ Ա. Սուքիասյանի կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան հաշվետվություն

2022-2023 ուսումնական տարում 6-րդ <<ա>> դասարանում սովորում են 28 աշակերտներ՝ 13 աղջիկ և 15 տղա: Դասարանի բոլոր աշակերտները ուսումնասիրում են անգլերեն: Դասարանի 6 աշակերտներ ցուցաբերել են զերազանց առաջադիմություն, իսկ 9-ը առաջավոր են ուսման մեջ: Դասարանի ուսման որակը կազմել է 53%: Դասարանի շատ աշակերտներ ընդգրկված են տարբեր խմբակներում: Սիրում են ֆիզկուլտուրայի դասերը: Դասարանի աշակերտները դպրոցական թիմի կազմում մասնակցել են Սպորտլանդիայի քաղաքային և մարզային փուլերին, զբաղեցրել 1-ին տեղ: Ակտիվ մասնակցում են տարբեր տեսակի դասարանային և համադպրոցական միջոցառումներին:Կոլեկտիվը համախմբված է, ընկերասեր: Համագործակցության շնորհիվ կարողանում են դասարանում կարգ ու կանոն ապահովել:

1. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ անցկացվել են բոլոր դասղեկական ժամերին հետևյալ թեմաներով՝ <<Իմ կյանքի կանոնները>>, <<Իմ իրավունքները և պարտականությունները >>, <<Մասնագիտություններ, որոնց մասին երազում եմ>>.<<Դպրոցը մեր մեծ և համերաշխ ընտանիքն է>> ,<<Ի՞նչ է ընկերասիրությունը >> և այլն:Դպրոցում կազմակերպված միջոցառումներին մասնակցել են մեծ խանդավառությամբ, որից հետո անցկացվել են քննարկումներ, աշակերտները կիսվել են տպավորություններով: Դասարանի աշակերտները ակտիվորեն մասնակցել են առարկայական օլիմպիադաներին և մրցույթներին:

2.Հայեցի և հոգևոր դաստիարակության նպատակով անցկացվել են զրույցներ, միջոցառումներ հետևյալ թեմաներով՝ <<Իմ երկիրը երեկ, այսօր և վաղը>>,<<Ես հպարտ եմ , որ հայ եմ>>, <<Հայաստանը ես եմ >> և այլն: Դասարանը ակտիվ մասնակցել է դպրոցում կազմակերպված Մայրենիի միջազգային օրվան նվիրված միջոցառմանը:Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ դպրոցական գրադարանին գրքեր են նվիրել:

3.Գեղագիտական դաստիարակության նպատակով անց են կացվել դասղեկական ժամեր <<Գեղեցիկի աշխարհում>> խորագրով՝ <<Իմ սիրելի նկարիչը >> , <<Այվազովսկու կյանքը և ստեղծագործությունները >> և այլն : Այցելել ենք <<Շուշիի գորգեր >> ցուցահանդեսին Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնում: Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատում մասնակցել ենք<<Մուլտիպլիկացիոն և անիմացիոն ֆիլմերի շաբաթ>> միջոցառմանը՝ նվիրված Հայ կինոի 100-ամյակին:

4. Ռազմահայրենասիրական դաստիարակություն: Անցկացվել են զրույցներ << Մեր ժամանակի հերոսներ>>,<<Մայիսյան հաղթանակներ>> թեմաներով: Հայոց բանակի , հերոսամարտերին նվիրված միջոցառումներին դասարանի աշակերտները մասնակցել են մեծ ոգևորությամբ:

5. Աշխատանքային դաստիարակություն: Ակտիվորեն մասնակցել ենք դպրոցական, համաքաղաքային և համապետական շաբաթօրյակներին: Աշակերտները խնամքով հետևել են դասարանի սանիտարական վիճակին: Մասնակցում են <<Դպրոցական մինի այգի>> ծրագրին: Անցկացվել է բաց դասղեկական ժամ <<Մեր ծնողների մասնագիտությունները>>:

6. Բնապահպանական դաստիարակություն: Մասնակցել են<< Ածխածնային հետք >> դաս-միջոցառմանը և կազմակերպել են սննդամթերքների թափոնների հավաքում, այն դպրոցական այգում կոմպոտի վերածելու նպատակով: Անցկացվել են դասղեկական ժամեր հետևյալ թեմաներով՝ <<Վնասակար սովորություններ. նրանց հետևանքները>>, <<Իմ աշխարհը>> և այլն:

7. Երաժշտության ուսուցիչ Ք. Դավթյանը դասարանի աշակերտների հետ միասին անցեկացրել է միջոցառում՝ նվիրված ընտանիքի միջազգային օրվան: Բազմաթիվ էին նաև բաց դասերը տարբեր առարկաներից:

8. Անցկացվել են 4 ծնողական ժողովներ, քննարկվել են առաջադիմությանը, վարքին, աշակերտների բացակայությանը վերաբերող և այլ կազմակերպչական հարցեր:

9.Ուսումնական տարին ավարտեցինք հետաքրքիր էքսկուրսիայով դեպի Խոր Վիրապ, Մատենադարան: